


**«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական
կրթական կազմակերպություն**

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Ս.Ա.



Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., դոցենտ Խաչատրյան Ս.Ա.

ԴԱՍԱՆԹԱՅԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Բժշկական իրավունքի հիմունքներ

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Բովանդակությունը

Ներածություն	3
1.1. Տվյալ առարկայի բովանդակության համառոտ նկարագրությունը	3
1.2. Ծավալը ակադեմիական կրեդիտներով և ժամերով	3
1.3. Առարկայի փոխկապակցվածությունը (ուղղության) ուսումնական պլանի այլ առարկաների հետ	3
1.4. Դասընթացի ծրագրի յուրացման արդյունքները	3
Գիտելիքները`	3
Հմտությունները`	3
Ձ Ընդհանրական իմացական հմտությունները`	4
Կարողունակությունը (կոմպետենցիան)`	4
2. Առարկայական ծրագիրը	4
2.1. Նպատակը և խնդիրները	4
Դասընթացի հիմնական խնդիրներն են`	4
2.2. Դասընթացի ծանրաբեռնվածության ծավալը և ուսումնական աշխատանքի ձևերը	5
2.3. Թեմատիկ պլան	Ошибка! Закладка не определена.
2.4. Դասընթացի բաժինների համառոտ բովանդակությունը	7
3. Տեսական բլոկ	2
3.1. Դասընթացի տեսական մասի նյութերը	2
3.1.1. Դասագիրք(եր)	2
3.1.2. Մենագրություններ, բրոշյուրներ, հոդվածներ	2
3.1.3. Ուսումնական ձեռնարկ(ներ)	2
3.1.4. Դասընթացի ուսումնական ծրագրի յուրացման համար անհրաժեշտ այլ նյութեր (սորմատիվ բազա)	2
4. Գնահատման միջոցները	3
4.2. Կարողունակության գնահատման ցուցանիշները և չափանիշները	3
4.1. Կարողունակության ցանկը	3
4.2.1. Վերլուծական կարողություններ	4
4.2.2. Իրավական փաստարկում	5
4.2.3. Իրավունքի տեսական հիմունքների իմացություն	5
4.2.4. Հստակություն և ընկալելիություն	6
4.2.5. Համակարգվածություն և կառուցվածքայնություն	6
4.3. Ստուգողական առաջադրանքների և գիտելիքների գնահատման համար անհրաժեշտ այլ նյութերի տիպային օրինակներ	7
4.3.1. Սեմինար պարապմունքների ժամանակ վերլուծական քննարկման հարցեր (ըստ թեմաների)	7
4.3.2. Էսսեների, ռեֆերատների, վերլուծական աշխատանքների թեմաներ	10

4.3.3. Քննական առաջադրանքների օրինակներ	11
4.4. Մեթոդական նյութեր, որոնք սահմանում են գնահատման ընթացակարգերը	14
4.4.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը.....	14
4.4.2. Ատեստավորման ձևը (ստուգարք, քննություն).....	14
4.4.3. Գնահատման ընթացակարգը	14
4.4.4. Գնահատման չափանիշներ.....	15
4.4.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ.....	15

Ներածություն

1.1. Տվյալ առարկայի բովանդակության համառոտ նկարագրությունը

«Բժշկական իրավունքի հիմունքներ» առարկան պատկանում է բակալավրիատի ուսումնական պլանի 1-ին բլոկի «Առարկաներ (մոդուլներ)» ընտրովի առարկաների մասին: Տվյալ առարկայի ուսումնասիրության հիմնական նպատակներն են իրավական երևույթների վերաբերյալ ընդհանուր գիտելիքների յուրացումը, մասնավորապես առողջապահության, բուժաշխատող-պացիենտ հարաբերությունների և հանրային առողջապահության կառավարման ոլորտում: Դասընթացի բովանդակությունը մշակված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30.11.2021 թ. 50-Լ հրամանով հաստատված «Իրավագիտություն» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերին համապատասխան:

1.2. Ծավալը ակադեմիական կրեդիտներով և ժամերով

Առարկայի ծավալը՝ 72 ժամ, կրեդիտ՝ «2» ECTS:

1.3. Առարկայի փոխկապակցվածությունը (ուղղության) ուսումնական պլանի այլ առարկաների հետ

Դասընթացը գտնվում է տրամաբանական և բովանդակային կապի մեջ այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են Սահմանադրական իրավունքը, Քաղաքացիական իրավունքը և Վարչական իրավունքը:

1.4. Դասընթացի ծրագրի յուրացման արդյունքները

Գիտելիքները՝

- իմանա «Բժշկական իրավունքի հիմունքները» դասընթացի ընդհանուր հասկացությունները, հարաբերությունների կարգավորման հիմնարար սկզբունքներն ու մեթոդաբանությունը,
- իմանա բժշկական իրավունքում հարաբերությունները կարգավորող օրենսդրության հիմնական պահանջները,
- իմանա բժշկական իրավունքին առնչող հարցերում փաստական հանգամանքները վերլուծելու, նույնականացնելու և դրանք ըստ նորմերի որակելու գիտելիքին

Հմտությունները՝

- գիտելիքի կիրառման հմտությունները՝
- տիրապետի բժշկական իրավահարաբերություններին առնչվող վեճերի ճիշտ լուծմանն ուղղված գործելակերպ, իրավաբանական խոսքի՝ բանավոր ու գրավոր

փաստարկումների շարադրման, ներկայացնելու մեթոդաբանությունը

- ընդհանրական իմացական հմտությունները՝

կարողանա մշակել ու ձևակերպել իրավական խնդիրների լուծման համար առաջարկներ՝ ճիշտ կիրառելով այդ իրավունքի նորմերի պահանջները,

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

կարողանա կիրառել մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող դրույթները և իրավական վեճերի լուծման գործընթացի բոլոր փուլերում:

, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն առողջապահական վեճերի շրջանակում:

2. Առարկայական ծրագիրը

2.1. Նպատակը և խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակը «Բժշկական իրավունքի հիմունքներ» և բիոէթիկայի դասընթացի հիմնական նպատակն է իրավաբանական և բժշկական կրթություն ունեցող անձանց զինել անհրաժեշտ գիտելիքներով՝ կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության սկզբունքները գործնականում կիրառելու համար:

Դասընթացի խնդիրը և մեթոդական հենքը Դասընթացի խնդիրն է համակողմանիորեն ուսումնասիրել բժշկական միջամտության համար պահանջվող ազատ ու իրազեկված համաձայնության, բժշկական գաղտնիքի պահպանման և տվյալների պաշտպանության իրավական կարգավորման հիմունքները, ինչպես նաև վերլուծել էթիկական և իրավական այն բարդ մարտահրավերները, որոնք ծագում են բժշկական փորձարկումների, վերարտադրողական տեխնոլոգիաների, գենետիկ թեստավորման և օրգանների փոխպատվաստման բնագավառներում:

Հենվելով Օվիեդոյի կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի վրա՝ դասընթացը ձևավորում է մեթոդական հենք՝ ժամանակակից առողջապահության զարգացումները միջազգային իրավական չափանիշներին համապատասխանեցնելու համար:

Դասընթացի հիմնական խնդիրներն են՝

- Բժշկական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդը, սկզբունքները և ներպետական, եվրոպական ու միջազգային աղբյուրները:
- Բժշկական իրավունքի նորմերի հասկացությունը, կառուցվածքը, տեսակները, առանձնահատկությունները:
- Բժշկական իրավահարաբերությունների սուբյեկտների հասկացությունը, տեսակներն ու դրանց առանձնահատկությունները, դրանց շարքում առողջապահության ոլորտի հիմնական դերակատարների հաստատությունների գործառնական առանձնահատկությունները:
- Բժշկական ոլորտը կարգավորող մասնավոր իրավունքի նորմերն ու հատկապես կնքվող գործարքների ու պայմանագրերի առանձնահատկությունները:
- Բժշկական իրավունքի կարգավորման ու կենսաբժշկության արդի հիմնահարցերը:

- Բժշկական ոլորտում քաղաքացիական, վարչական ու քրեական պատասխանատվության իրավական հիմնադրույթները:

2.2. Դասընթացի ծանրաբեռնվածության ծավալը և ուսումնական աշխատանքի ձևերը

Դասընթացը ներառված է «Ֆակուլտատիվ դասընթացների կրթաբլոկում» 4 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարություն, այդ թվում՝	72
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	32
1.1.1. Դասախոսություններ	16
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	16
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	40
1.2.1. Զննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Ստուգարք (գնահատակ անով)

2.3. Թեմատիկ պլան

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսություններ	Գործնական / սեմինար
1	2=3+4	3	4
Թեմա 1. Բժշկական իրավունքի հասկացությունը, աղբյուրներն ու սկզբունքները	6	4	2
Թեմա 2. Պացիենտի ազատ ընտրության ու իրազեկված համաձայնության իրավունքը	6	2	4
Թեմա 3. Բժշկական գաղտնիքը ու բժշկական տվյալների պաշտպանությունը	4	2	2
Թեմա 4. Վերարտադրողական առողջությունն ու էմբրիոնի պաշտպանություն	4	2	2
Թեմա 5. Կյանքի ավարտի էթիկական հարցերը	4	2	2
Թեմա 6. Օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստումը	4	2	2
Թեմա 7. Կենսաբժշկական հետազոտություն	4	2	2

Ընդամենը	32	16	16
-----------------	-----------	-----------	-----------

2.4. Դասընթացի բաժինների համառոտ բովանդակությունը

Թեմա 1. Բժշկական իրավունքի հասկացությունը, աղբյուրներն ու սկզբունքները

Այս թեման ներառում է բժշկական իրավունքի հիմնական սահմանումները և միջազգային իրավական կարգավորումների շրջանակը: Առանցքային տեղ է զբաղեցնում 1997 թվականին ընդունված Եվրոպայի խորհրդի Օվիեդոյի կոնվենցիան, որը հանդիսանում է կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության հենակետային փաստաթուղթը: Ուսումնասիրվում են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերն ու Բիոէթիկայի հարցերով հանձնաժողովի կողմից ընդունված խորհրդատվական իրավական փաստաթղթերը:

Թեմա 2. Պացիենտի ազատ ընտրության ու իրազեկված համաձայնության իրավունքը

Թեման նվիրված է պացիենտի կողմից տրվող ազատ և իրազեկված համաձայնության սահմանմանը, որը բժշկական միջամտության անհրաժեշտ նախապայմանն է: Դասընթացը մանրամասնում է համաձայնության տարրերը, դրա տրման կարգը, ինչպես նաև պացիենտի իրավունքը՝ մերժելու կամ հրաժարվելու բժշկական միջամտությունից: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև համաձայնության տրման հնարավոր սահմանափակումներին:

Թեմա 3. Բժշկական գաղտնիքը ու բժշկական տվյալների պաշտպանությունը

Այս բաժնում քննարկվում է բժշկական տվյալների սահմանումը և դրանց պաշտպանության իրավական կարգավորման շրջանակը: Ուսումնասիրվում են բուժաշխատողների պարտականությունները տվյալների մշակման հարցում, պացիենտի իրավունքը՝ մատչելիություն ունենալ իր առողջական վիճակի մասին տեղեկատվությանը, ինչպես նաև բժշկական գաղտնիքի պահպանման իրավունքի թույլատրելի սահմանափակումները:

Թեմա 4. Վերարտադրողական առողջությունն ու էմբրիոնի պաշտպանություն

Թեման անդրադառնում է էմբրիոնի իրավական կարգավիճակի վերաբերյալ հիմնական հայացքներին և վերարտադրողական առողջության հարցերին: Քննարկվում են օժանդակ տեխնոլոգիաների կիրառման իրավական հիմքերը, վերարտադրողական կլոնավորման բացարձակ արգելքը և նախաձննդյան ախտորոշման հետ կապված էթիկական ու իրավական խնդիրները:

Թեմա 5. Կյանքի ավարտի էթիկական հարցերը

Այս թեման ներառում է կյանքի վերջին փուլում գտնվող պացիենտների վերաբերյալ որոշումների կայացման բարդ գործընթացը: Ուսումնասիրվում են բժշկական միջամտությունից, արհեստական սնուցումից ու հիդրատացումից հրաժարվելու իրավական հիմքերը, պալիատիվ խնամքի կազմակերպումը և պացիենտի կողմից նախկինում արտահայտած ցանկությունների իրավական ուժը:

Թեմա 6. Օրգանների ու հյուսվածքների փոխադաստվածություն

Թեման սահմանում է օրգանների ու հյուսվածքների փոխադաստվածման իրավական և բարոյագիտական շրջանակը: Այն ընդգրկում է փոխադաստվածման ոլորտի ընդհանուր սկզբունքները, ինչպես նաև կենդանի և դիակային դոնորության հետ կապված առանձնահատուկ իրավական կարգավորումներն ու էթիկական մարտահրավերները:

Թեմա 7. Կենսաբժշկական հետազոտություն

Այս բաժինը նվիրված է կենսաբժշկական հետազոտությունների իրավական և բարոյագիտական սկզբունքներին: Դիտարկվում են հետազոտության մասնակիցների իրազեկման և համաձայնության տրման գործընթացները, անվտանգության երաշխիքները բուժման նոր մեթոդների ու տեխնոլոգիաների փորձարկման ժամանակ, ինչպես նաև հետազոտության ընթացքում ստացված տեղեկատվության գաղտնիության ապահովումը:

3. Տեսական բլոկ

3.1. Դասընթացի տեսական մասի նյութերը

3.1.1. Դասագիրք(եր)

Лопатин П.В. (ред.), «Биоэтика: учебник для вузов», 2020.

Стеценко С.Г., «Медицинское право: учебник для юридических вузов», 2019.

Beauchamp, T. L., & Childress, J. F., "Principles of Biomedical Ethics", 8th Edition, Oxford University Press, 2019.

Herring, J., "Medical Law and Ethics", 9th Edition, Oxford University Press, 2022.

Jackson, E., "Medical Law: Text, Cases, and Materials", 6th Edition, 2022.

Kennedy, I., & Grubb, A., "Medical Law", Oxford University Press, 2010.

3.1.2. Մենագրություններ, քրոշյուրներ, հոդվածներ

Путило Н.В., «Публичное право и охрана здоровья: теоретические основы», 2018.

Романовский Г.Б., «Правовое регулирование биомедицинских исследований», 2020.

Gostin, L. O., & Wiley, L. F., "Public Health Law: Power, Duty, Restraint", 3rd Edition, University of California Press, 2016.

3.1.3. Ուսումնական ձեռնարկ(ներ)

Мохов А.А., «Медицинское право (основы изложения)», Учебное пособие, 2021.

Сашко С.Ю., Кочорова Л.В., «Медицинское право. Учебное пособие», 2022.

Сергеев Ю.Д., «Медицинское право: учебный комплекс», ГЭОТАР-Медиа, 2022.

3.1.4. Դասընթացի ուսումնական ծրագրի յուրացման համար անհրաժեշտ այլ նյութեր (նորմատիվ բազա)

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը կենսաբժշկության ոլորտում (Ուղեցույց), ԵԽ/ՄԻԵԴ, 2022.

Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիա (Օվիեդոյի կոնվենցիա),

Եվրոպայի խորհուրդ, 1997.

ՀՀ Օրենքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր (վերջին փոփոխություններով), 1996.

ՀԵԼՓ-ի (HELP) առցանց դասընթացի նյութեր. Կենսաբժշկությունում մարդու իրավունքների հիմնական սկզբունքները, Եվրոպայի խորհուրդ, 2018.

Council of Europe, "Guide to the preparation, use and quality assurance of organs for transplantation", 8th Edition, 2022.

European Court of Human Rights, "Case-law Guide: Bioethics and Health-related Rights", 2023.

4. Գնահատման միջոցները

4.2. Կարողունակության գնահատման ցուցանիշները և չափանիշները

4.1. Կարողունակության ցանկը

Կենսաբժշկության և առողջապահության ոլորտում մարդու իրավունքների ու արժանապատվության պաշտպանության հիմնական օրինաչափությունները վերլուծելու կարողունակությունը ձևավորվում է բոլոր թեմաների շրջանակներում (Բժշկական իրավունքի հասկացությունը և աղբյուրները. Բժշկական իրավահարաբերությունների սուբյեկտները. Բժշկական գաղտնիք և անձնական տվյալների պաշտպանություն): Այդ կարողունակությունը ստուգվում է սեմինարային հարցերի, քննական հարցերի, թեստային առաջադրանքների և ռեֆերատների միջոցով:

Բժշկական միջամտության, իրազեկված համաձայնության և բժշկական ծառայությունների մատուցման պայմանագրային նորմերը գործնական խնդիրներ լուծելիս կիրառելու կարողունակությունը ձևավորվում է 2-րդ, 4-րդ և 6-րդ թեմաների շրջանակներում (Մասնավոր իրավունքի նորմերը բժշկական ոլորտում. Ազատ և իրազեկված համաձայնություն. Բժշկական միջամտության իրավաչափության պայմանները): Այդ կարողունակությունը ստուգվում է խնդիրների (կագուսների), վերլուծական հարցերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով:

Բժշկական և բիոէթիկական նորմերը (այդ թվում՝ Օվիեդոյի կոնվենցիան և ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան) մասնագիտորեն մեկնաբանելու կարողունակությունը ձևավորվում է 1-ից 7-րդ թեմաների շրջանակներում (Բժշկական իրավունքի աղբյուրները. Միջազգային իրավական չափանիշները առողջապահության ոլորտում. ՄԻԵԴ պրակտիկան): Այդ կարողունակությունը ստուգվում է սեմինարային հարցերի, մեկնաբանման առաջադրանքների և թեստերի միջոցով:

Տրամաբանորեն ճիշտ, հիմնավորված և հստակ բանավոր ու գրավոր խոսքը բժշկաիրավական միասնական և ճիշտ մասնագիտական բառապաշարի օգտագործմամբ ձևավորելու կարողունակությունը ձևավորվում է բոլոր թեմաների շրջանակներում: Այդ կարողունակությունը ստուգվում է ռեֆերատների, էսսեների, վերլուծական հարցերի և սեմինարներին բանավոր պատասխանների միջոցով:

Առողջապահական ոլորտի իրավական ակտերի և պացիենտի հետ կնքվող պայմանագրերի նախագծերի պատրաստմանը մասնակցելու կարողունակությունը ձևավորվում է 2-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ թեմաների շրջանակներում (Մասնավոր իրավունքի նորմերը բժշկական ոլորտում. Բժշկական ծառայությունների մատուցման պայմանագրերի առանձնահատկությունները): Այդ կարողունակությունը ստուգվում է գործնական առաջադրանքների և էսսեների միջոցով:

Կենսաբժշկության արդի հիմնահարցերի վերաբերյալ տեղեկատվության որոնում, քննադատական վերլուծություն և սինթեզ իրականացնելու կարողունակությունը ձևավորվում է 3-րդ, 4-րդ և 7-րդ թեմաների շրջանակներում (Արդի հիմնահարցեր. Օրգանների փոխապատվաստում և դոնորություն. Վերարտադրողական տեխնոլոգիաներ և գենետիկ թեստավորում): Այդ կարողունակությունը ստուգվում է ռեֆերատների, վերլուծական հարցերի և քննարկումների միջոցով:

Բժշկական փորձարկումների կամ բարդ միջամտությունների ժամանակ ծագող էթիկական և իրավական մարտահրավերների լուծման օպտիմալ եղանակներն ընտրելու կարողունակությունը ձևավորվում է 5-7-րդ թեմաների շրջանակներում (Բժշկական փորձարկումներ և բիոէթիկա. Բժշկական սխալ և ռիսկ. Պատասխանատվությունը բժշկական ոլորտում): Այդ կարողունակությունը ստուգվում է խնդիրների (կագուսների) և իրավիճակային առաջադրանքների միջոցով:

Մեփական ժամանակը կառավարելու, ողջ կյանքի ընթացքում բժշկաիրավական կրթության սկզբունքների հիման վրա ինքնագարգացման հետագիծ մշակելու և իրականացնելու կարողունակությունը ձևավորվում է բոլոր թեմաների շրջանակներում: Այդ կարողունակությունը ստուգվում է ինքնուրույն աշխատանքի, ռեֆերատների և էսսեների պատրաստման միջոցով:

Առողջապահության ոլորտում կոռուպցիոն վարքագծի, ինչպես նաև էթիկայի և դեոնտոլոգիայի կանոնների խախտման նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք ձևավորելու կարողունակությունը ձևավորվում է 4-ից 7-րդ թեմաների շրջանակներում (Քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվությունը. Բժշկական էթիկա և դեոնտոլոգիա): Այդ կարողունակությունը ստուգվում է քննարկումների, վերլուծական հարցերի և իրավիճակային խնդիրների միջոցով:

Չարգացած բիոէթիկական գիտակցության, բժշկաիրավական մտածողության և պացիենտի իրավունքների հարգանքի հիման վրա մասնագիտական գործունեություն իրականացնելու կարողունակությունը ձևավորվում է 1-ին, 2-րդ թեմաների շրջանակներում (Բժշկական իրավունքի հիմունքները. Բժշկական իրավահարաբերությունների սուբյեկտները. Բիոէթիկայի սկզբունքները): Այդ կարողունակությունը ստուգվում է ռեֆերատների, էսսեների և վերլուծական հարցերի միջոցով:

4.2.1. Վերլուծական կարողություններ

A (88–100 միավոր) «Գերազանց». Ուսանողն առանձնացնում է խնդրի բոլոր էական կողմերը, իրականացնում է ինքնուրույն իրավական վերլուծություն, համեմատում է դոկտրինալ մոտեցումները իրավաբանական, իրավունքի էության, սկզբունքների, գործառնությունների, աղբյուրների, համակարգի, իրավական նորմի կառուցվածքի, իրավահարաբերությունների, իրավունքի իրացման և կիրառման, մեկնաբանման, կոլիզիաների և իրավաբանական պատասխանատվության վերաբերյալ. բացահայտում է իրավական ինստիտուտների զարգացման օրինաչափությունները. վերլուծում է իրավունքի և օրենքի փոխհարաբերությունը, իրավական կարգավորման արդյունավետությունը. ազատորեն կիրառում է իրավագիտակցության, իրավական մշակույթի, օրինականության, իրավակարգի կատեգորիաները:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Ուսանողը բացահայտում է խնդրի հիմնական կողմերը, վերլուծությունն իրականացնում է ինքնուրույն եզրահանգումների առանձին տարրերով. ընդհանուր առմամբ ճիշտ է որոշում իրավունքի էությունը, գործառնությունն ու աղբյուրները (ձևերը). ցուցաբերում է ըմբռնում իրավունքի հիմնական գործառնությունների և դրանց կապի ճյուղային բաժանման հետ:

C (64–75 միավոր) «Լավ». Ուսանողը ճիշտ է որոշում հիմնական կատեգորիաները, սակայն վերլուծությունը կրում է նկարագրական բնույթ. թույլ է տալիս առանձին անճշտություններ իրավունքի գործառնությունների և աղբյուրների բնութագրման ժամանակ. դժվարանում է տարբերակել մեկնաբանման տեսակներն ու բացերը հաղթահարելու եղանակները:

D (52–63 միավոր) «Բավարար». Ուսանողը վերարտադրում է հիմնական մոտեցումները, սակայն վերլուծությունը մակերեսային է. դժվարանում է իրավական նորմերի դասակարգման, ճյուղերի համակարգման, հանրային և մասնավոր իրավունքի տարանջատման հարցում. չի տարբերակում իրավահարաբերությունների և իրավական փաստերի տեսակները:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Ուսանողը տալիս է երևույթների ընդհանուր բնութագիր, սակայն ինքնուրույն վերլուծություն չի իրականացնում. թույլ է տալիս էական սխալներ իրավունքի տեսության կատեգորիաների սահմանման ժամանակ. չի կարող բնութագրել իրավական կարգավորման մեխանիզմի տարրերը:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Ուսանողը չի կարողանում առանձնացնել խնդրի էական կողմերը, վերլուծությունը բացակայում է կամ կրում է մակերեսային բնույթ. չի տարբերում իրավական նորմերի, աղբյուրների, իրավունքի իրացման ձևերի տեսակները:

F (0–19 միավոր) «Անբավարար». Վերլուծությունն ամբողջությամբ բացակայում է. ուսանողը չի կարող առանձնացնել նույնիսկ իրավունքի տեսության հիմնական կատեգորիաները:

4.2.2. Իրավական փաստարկում

A (88–100 միավոր) «Գերազանց». Ուսանողը ներկայացնում է մանրամասն իրավական փաստարկում՝ հղումներով դոկտրինին, նորմատիվ ակտերին (ՀՀ Սահմանադրություն, ՀՀ օրենքներ) և դատական ու իրավակիրառ պրակտիկայի օրինակներին. հիմնավորում է դիրքորոշումը անձի իրավական կարգավիճակի, իրավունքից հրաժարվելու, իրավական նորմերի մեկնաբանման, բացերի ու կոլիզիաների հաղթահարման հարցերում. կիրառում է համեմատաիրավական և ձևական-իրավաբանական մեթոդները:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Փաստարկումն ընդհանուր առմամբ հետևողական է, առկա են առանձին հղումներ իրավունքի նորմերին (ՀՀ Սահմանադրություն, օրենքներ) և գիտական մոտեցումներին. բերում է պրակտիկայի օրինակներ:

C (64–75 միավոր) «Լավ». Փաստարկումը մասնատված է, դոկտրինին և նորմատիվ ակտերին հղումներ կան, սակայն ոչ միշտ են համապատասխան. օրինակները միշտ չէ, որ արդիական են:

D (52–63 միավոր) «Բավարար». Փաստարկումը թույլ է, դոկտրինին հղումները բացակայում են կամ թերի են. նորմատիվ ակտերին հղումները եզակի են:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Փաստարկումը կրում է ընդհանուր բնույթ՝ առանց կոնկրետ նորմերի կամ դոկտրինի հղումների:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Փաստարկումը բացակայում է կամ չի համապատասխանում առաջադրված հարցին. ուսանողը չի կարող հիմնավորել սեփական դիրքորոշումը:

F (0–19 միավոր) «Անբավարար». Փաստարկումն ամբողջությամբ բացակայում է:

4.2.3. Իրավունքի տեսական հիմունքների իմացություն

A (88–100 միավոր) «Գերազանց». Ուսանողն ազատորեն կողմնորոշվում է բոլոր հիմնական հասկացություններում՝ իրավաբանական, իրավունք, դրա էությունն ու հատկանիշները, իրավունքի սկզբունքներն ու գործառնությունները, իրավագիտակցությունն ու իրավական մշակույթը, իրավունքի աղբյուրները (ձևերը), իրավունքի համակարգն ու օրենսդրության համակարգը, իրավական նորմը (կառուցվածք, տեսակներ), իրավահարաբերությունները (տարրեր, տեսակներ), իրավաբանական վարույթը, իրավական կարգավորումը (առարկա, մեթոդներ, եղանակներ, տիպեր), իրավունքի իրացումն ու կիրառումը, իրավակիրառ ակտը, ապացուցումն ու ապացույցները, իրավունքի մեկնաբանումը (տեսակներ, եղանակներ), իրավական

կողիզիաներն ու դրանց լուծումը, իրավական վարքագիծը, իրավաբանական պատասխանատվությունը (հասկացություն, տեսակներ, սկզբունքներ). գիտի իրավաբանական քննարկվող մոտեցումները:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Ուսանողը վստահորեն գիտի իրավունքի տեսության հիմնական դրույթները, թույլ է տալիս առանձին անճշտություններ աղբյուրների տեսակների, իրավական նորմի կառուցվածքի, իրավահարաբերության տարրերի, իրավակիրառման փուլերի որոշման ժամանակ. գիտի իրավունքի հիմնական գործառույթները:

C (64–75 միավոր) «Լավ». Ուսանողը գիտի հիմնական հասկացությունները, սակայն թույլ է տալիս սխալներ. գիտելիքը մասնատված է. շփոթում է հիպոթեզների, դիսպոզիցիաների, սանկցիաների տեսակները. խառնում է մեկնաբանման եղանակները. չի կարող նշել իրավաբանական պատասխանատվության բոլոր տեսակները:

D (52–63 միավոր) «Բավարար». Ուսանողը վերարտադրում է հիմնական հասկացությունները, սակայն թույլ է տալիս էական սխալներ. չի կարող նշել իրավունքի սկզբունքների համակարգը:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Ուսանողը գիտի առանձին հասկացություններ, սակայն չի կարող դրանք համակարգել. չի կարող նշել իրավունքի հատկանիշները, գործառույթներն ու աղբյուրները:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Ուսանողը չգիտի իրավունքի տեսության հիմնական հասկացություններն ու կատեգորիաները. չի կարող նշել իրավունքի հատկանիշները, գործառույթներն ու աղբյուրները:

F (0–19 միավոր) «Անբավարար». Գիտելիքն ամբողջությամբ բացակայում է:

4.2.4. Հստակություն և ընկալելիություն

A (88–100 միավոր) «Գերազանց». Պատասխանը կառուցված է, օգտագործված են ճշգրիտ իրավական հասկացություններ, եզրակացություններ ձևակերպված են պարզ: Ցուցաբերում է ըմբռնում հետևյալ հասկացությունների փոխհարաբերության՝ իրավական նորմ և նորմատիվ իրավական ակտի հոդված. հանրային և մասնավոր իրավունք. նյութական և դատավարական իրավունք. օրենքի անալոգիա և իրավունքի անալոգիա. մեկնաբանում և իրավաստեղծում. իրավաչափ վարքագիծ և իրավախախտում. իրավաբանական պատասխանատվություն և պաշտպանական միջոցներ. կանխավարկած և ֆիկցիա. լեզվություն և լեզվոտիմություն (սուբյեկտների գործողությունների իրավաչափության համատեքստում):

B (76–87 միավոր) «Շատ լավ». Պատասխանը բավականաչափ հասկանալի է, տերմինաբանությունն առավելապես օգտագործվում է ճիշտ. առանձին հասկացություններ կիրառվում են ոչ ճշգրիտ:

C (64–75 միավոր) «Լավ». Պատասխանն ընդհանուր է, տերմինաբանությունը միշտ չէ, որ ճշգրիտ է, թույլ են տրվում սխալներ հատուկ տերմինների գործածության մեջ (օրինակ՝ շփոթում է մեկնաբանման տեսակներն ըստ ծավալի, խառնում դիսպոզիտիվ և իմպերատիվ նորմերը, սխալ է որոշում իրավահարաբերությունների տեսակները):

D (52–63 միավոր) «Բավարար». Պատասխանն անհետևողական է, իրավական տերմինաբանությունն օգտագործվում է սխալ կամ բացակայում է. չի տարբերում հիմնական իրավական հասկացությունները:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Պատասխանը շփոթեցնող է, տերմինաբանությունը՝ սխալ:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Պատասխանն անհասկանալի է, տերմինները չեն օգտագործվում:

F (0–19 միավոր) «Անբավարար». Պատասխանը բացակայում է:

4.2.5. Համակարգվածություն և կառուցվածքայնություն

A (88–100 միավոր) «Գերազանց». Պատասխանը տրամաբանորեն կառուցված է,

առանձնացված են ներածությունը, հիմնական մասը, եզրակացությունները. նկատվում է համակարգային մոտեցում իրավական երևույթների վերլուծության նկատմամբ:

B (76–87 միավոր) «Ճատ լավ». Պատասխանն ընդհանուր առմամբ տրամաբանական է, կառուցվածքը մասամբ պահպանված է. եզրակացություններն առկա են, սակայն բավարար մանրամասն չեն:

C (64–75 միավոր) «Լավ». Խախտված է շարադրման տրամաբանությունը, եզրակացությունները բացակայում են կամ չեն համապատասխանում բովանդակությանը. շարադրանքն անհամակարգ է:

D (52–63 միավոր) «Բավարար». Պատասխանն անհամակարգ է, կառուցվածքը բացակայում է. շարադրանքը քառային է, չի նկատվում հասկացությունների միջև կապ:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Կառուցվածքը գրեթե բացակայում է:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Կառուցվածքը բացակայում է:

F (0–19 միավոր) «Անբավարար». Կառուցվածքը բացակայում է:

4.3. Ստուգողական առաջադրանքների և գիտելիքների գնահատման համար անհրաժեշտ այլ նյութերի տիպային օրինակներ

4.3.1. Սեմինար պարապմունքների ժամանակ վերլուծական քննարկման հարցեր (ըստ թեմաների)

Թեմա 1. Բժշկական իրավունքի հասկացությունը, աղբյուրներն ու սկզբունքները

- Որո՞նք են բժշկական իրավունքի ձևավորման հիմնական նախադրյալները, և արդյո՞ք այն պետք է դիտարկել որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ, թե՞ համալիր ինստիտուտ:
- Ինչպե՞ս են փոխազդում և հակադրվում բժշկական էթիկան, բարոյականությունը և բժշկական իրավունքը պրակտիկ գործունեության ընթացքում:
- Որո՞նք են Օվիեդոյի կոնվենցիայի հիմնարար դրույթները, և ի՞նչ ազդեցություն ունեն դրանք ներպետական օրենսդրության զարգացման վրա:
- Ի՞նչ դեր ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային պրակտիկան բժշկական իրավունքի միջազգային չափանիշների ձևավորման գործում:
- Որո՞նք են բժշկական իրավունքի հիմնական սկզբունքները (օրինակ՝ անձի ինքնավարություն, արդարություն, վնաս չպատճառել) և ինչպե՞ս են դրանք կիրառվում շահերի բախման իրավիճակներում:
- Ինչպե՞ս է սահմանվում բժշկական իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտների (պացիենտ, բժիշկ, բժշկական հաստատություն, պետություն) իրավական կարգավիճակը:
- Որո՞նք են առողջապահության ոլորտի ներպետական աղբյուրների (օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր) հիմնական բացերն ու հակասությունները միջազգային չափանիշների հետ:

Թեմա 2. Պացիենտի ազատ ընտրության ու իրազեկված համաձայնության իրավունքը

- Ի՞նչ պարտադիր տարրերից է բաղկացած «իրազեկված համաձայնությունը», և ըստ իրավական չափանիշների՝ ինչպե՞ս է գնահատվում տրամադրված տեղեկատվության բավարարությունը:
- Որո՞նք են բժշկական միջամտությունից հրաժարվելու իրավական հետևանքները, և արդյո՞ք պետությունն իրավունք ունի հարկադրել բուժում որոշակի դեպքերում:

- Ինչպե՞ս է իրացվում անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անչափահաս պացիենտների իրազեկված համաձայնության իրավունքը. ո՞ւմ է պատկանում որոշում կայացնելու իրավունքը:
- Ի՞նչ իրավական և էթիկական հետևանքներ է առաջացնում առանց պացիենտի համաձայնության բժշկական միջամտության իրականացումը անհետաձգելի՝ կյանքին վտանգ սպառնացող դեպքերում:
- Ինչպե՞ս կարող է բժիշկն ապահովել պացիենտի իրական ազատ ընտրությունը՝ բացառելով հոգեբանական ճնշումը կամ բժշկական հեղինակությամբ պայմանավորված պարտադրանքը:
- Ինչպե՞ս է կարգավորվում պացիենտի՝ այլ բժշկի, բժշկական հաստատության կամ բուժման այլընտրանքային մեթոդ ընտրելու իրավունքը գործնականում:
- Արդյո՞ք պացիենտն իրավունք ունի պահանջել բժշկական միջամտություն, որը բժիշկը համարում է ոչ նպատակահարմար կամ էթիկապես անընդունելի:

Թեմա 3. Բժշկական գաղտնիքը ու բժշկական տվյալների պաշտպանությունը

- Ո՞ր տեղեկատվությունն է դասվում բժշկական գաղտնիքի շարքին, և ի՞նչ իրավական մեխանիզմներով է երաշխավորվում դրա պահպանումը:
- Ի՞նչ բացառիկ դեպքերում և ի՞նչ ընթացակարգով է թույլատրվում բժշկական գաղտնիքի հրապարակումը կամ փոխանցումը երրորդ անձանց՝ առանց պացիենտի համաձայնության:
- Ինչպե՞ս պետք է հավասարակշռվի հանրային առողջապահության անվտանգության շահը (օրինակ՝ համաճարակներ, վարակիչ հիվանդություններ) և անձի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը:
- Ի՞նչ նոր ռիսկեր և առանձնահատկություններ է առաջացնում անձնական տվյալների պաշտպանությունը էլեկտրոնային առողջապահության (e-health) և բժշկական տվյալների թվային բազաների կիրառման դեպքում:
- Ինչպիսի՞ իրավական պատասխանատվություն է նախատեսված բժշկական հաստատությունների և բուժաշխատողների համար՝ տվյալների ապօրինի արտահոսքի կամ չարաշահման համար:
- Արդյո՞ք մահացած պացիենտի բժշկական գաղտնիքի պահպանման իրավունքը բացարձակ է, և ի՞նչ պայմաններում հարազատները կարող են մուտք ունենալ այդ տեղեկատվությանը:
- Ինչպե՞ս է ապահովվում պացիենտի՝ իր իսկ բժշկական փաստաթղթերին, հետազոտությունների արդյունքներին ծանոթանալու և պատճեններ ստանալու իրավունքը:

Թեմա 4. Վերարտադրողական առողջությունն ու էմբրիոնի պաշտպանություն

- Որո՞նք են արհեստական բեղմնավորման և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների (ՎՕՏ) կիրառման հիմնական իրավական և բարոյաէթիկական խնդիրները:
- Ինչպե՞ս է իրավունքը կարգավորում փոխնակ մայրությունը. ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունեն փոխնակ մայրը և կենսաբանական ծնողները, և ի՞նչ ռիսկեր կան երեխայի իրավունքների տեսանկյունից:
- Իրավական և էթիկական տեսանկյունից ո՞ր պահից է սկսվում մարդու կյանքի իրավական պաշտպանությունը, և ի՞նչ կարգավիճակ ունի in vitro պայմաններում գտնվող էմբրիոնը:

- Ի՞նչ մարտահրավերներ են ծագում սաղմերի սառեցման (կրիոկոնսերվացիայի) դեպքում, հասկապես՝ զույգի բաժանման կամ կենսաբանական ծնողներից մեկի մահվան պարագայում սաղմի տնօրինման հարցում:
- Մեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը (սելեկտիվ աբորտ). որո՞նք են սրա դեմ պայքարի իրավական մեխանիզմները և էթիկական դրդապատճառները:
- Ինչպե՞ս է հավասարակշռվում կնոջ՝ սեփական մարմինը տնօրինելու ինքնավարությունը և պետության՝ պտղի կյանքը պաշտպանելու պոզիտիվ պարտականությունը:
- Արդյո՞ք մարդու կլոնավորման և սաղմնային ցողունային բջիջների ստացման նպատակով սաղմի ստեղծման արգելքը խոչընդոտում է գիտական առաջընթացին: Ի՞նչ է ասում միջազգային իրավունքը:

Թեմա 5. Կյանքի ավարտի էթիկական հարցերը

- Որո՞նք են ակտիվ և պասիվ էվթանազիայի հիմնական իրավական և էթիկական տարբերությունները, և ինչպե՞ս է դրան վերաբերվում քրեական իրավունքը մեծամասնություն կազմող պետություններում:
- Արդյո՞ք «կյանքի իրավունքը» (հիմնված ՄԻԵԿ 2-րդ հոդվածի վրա) ենթադրում է նաև «մահվան իրավունք» կամ կյանքն իր կամքով ավարտելու իրավունք. քննարկել ՄԻԵԿ նախադեպերը:
- Ո՞րն է բժշկի աջակցությամբ ինքնասպանության (physician-assisted suicide) և էվթանազիայի սահմանագիծը, և որո՞նք են դրանց օրինականացման փաստարկներն ու հակափաստարկները:
- Ի՞նչ իրավական ուժ և նշանակություն ունեն կտակված բժշկական ցուցումները (advance directives / living wills) այն դեպքում, երբ պացիենտն այլևս ի վիճակի չէ արտահայտել իր կամքը:
- Ինչպե՞ս է լուծվում կենսաապահովման սարքերից (արհեստական շնչառություն, սնուցում) անջատելու հարցը, երբ բժիշկներն արձանագրում են անդառնալի վիճակ, իսկ հարազատները հրաժարվում են անջատելուց:
- Ո՞րն է պալիատիվ խնամքի դերը և իրավական կարգավիճակը որպես կյանքի ավարտի այլընտրանքային և արժանապատիվ մոտեցում:
- Կրկնակի էֆեկտի դոկտրինը (Doctrine of double effect). արդյո՞ք ցավազրկողների անհրաժեշտ մեծ չափաբաժնի կիրառումը, որն անխուսափելիորեն կարագացնի մահը, համարվում է իրավաչափ:

Թեմա 6. Օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստումը

- Որո՞նք են «ենթադրյալ համաձայնության» (opt-out) և «հայցվող/հստակ համաձայնության» (opt-in) իրավական մոդելների դրական ու բացասական կողմերը դիակային դոնորության դեպքում:
- Ի՞նչ միջազգային իրավական մեխանիզմներ են կիրառվում մարդկային օրգանների առուվաճառքը, թրաֆիքինգը և տրանսպլանտացիոն տուրիզմը կանխելու նպատակով:
- Որո՞նք են կենդանի դոնորից օրգան կամ հյուսվածք վերցնելու բարոյաէթիկական և իրավական խիստ չափանիշները (օրինակ՝ գիտակցված կամավորություն, անշահախնդրություն, ազգակցական կապի առկայություն):
- Ինչպե՞ս է ապահովվում արդարության և հավասարության սկզբունքը օրգանների բաշխման սպասման ցուցակներում (allocation of organs)՝ զերծ խտրականությունից ու կոռուպցիայից:

- Ինչպե՞ս է սահմանվում և արձանագրվում գլխուղեղի մահը, և ի՞նչ իրավական խնդիրներ են առաջանում գլխուղեղի մահվան և կենսաբանական մահվան տարանջատման գործընթացում:
- Ունե՞ն արդյոք հարազատները իրավասություն արգելելու օրգանների վերցնումը մահացածից, եթե վերջինս կենդանության օրոք գրավոր տվել է իր հստակ համաձայնությունը դոնոր դառնալու վերաբերյալ:
- Արդյո՞ք անգործունակ անձինք կամ անչափահասները որևէ բացառիկ պարագայում կարող են հանդես գալ որպես օրգանի կամ հյուսվածքի (օրինակ՝ ոսկրածուծի) կենդանի դոնոր:

Թեմա 7. Կենսաբժշկական հետազոտություն

- Որո՞նք են մարդու մասնակցությամբ կլինիկական փորձարկումների էթիկական հիմնաքարերը, որոնք ամրագրված են Նյուրնբերգյան կոդեքսում և Հելսինկյան հռչակագրում:
- Ի՞նչ առանձնահատկություններ ունի իրազեկված համաձայնությունը կենսաբժշկական հետազոտությունների ժամանակ, և ի՞նչ ռիսկերի մասին պետք է անխտիր տեղեկացվի փորձարկվողը:
- Ի՞նչ գործառնություններ և պատասխանատվություն ունեն անկախ էթիկայի հանձնաժողովները կենսաբժշկական հետազոտությունների ծրագրերի հաստատման և վերահսկման գործընթացում:
- Արդյո՞ք իրավաչափ և էթիկապես ընդունելի են փորձարկումները բնակչության խոցելի խմբերի (անչափահասներ, հոգեկան խանգարում ունեցողներ, ազատագրվածներ) շրջանում, և ի՞նչ հատուկ երաշխիքներ են գործում:
- Ինչպե՞ս է լուծվում կենսաբանական նմուշների (biobanks) և գենետիկական տվյալների հավաքագրման, պահպանման և ապագա անհայտ հետազոտություններում օգտագործման (broad consent) խնդիրը:
- Ի՞նչ իրավական պատասխանատվություն է կրում գլխավոր հետազոտողը կամ կազմակերպությունը փորձարկվողի առողջությանը վնաս պատճառելու դեպքում, և ի՞նչ դեր ունի պարտադիր ապահովագրությունը:
- Որո՞նք են պլացեբոյի (placebo) կիրառման էթիկական ու իրավական սահմանափակումները այնպիսի հիվանդությունների փորձարկումներում, որոնց համար արդեն իսկ գոյություն ունի ապացուցված արդյունավետ բուժում:

4.3.2. Էսսեների, ռեֆերատների, վերլուծական աշխատանքների թեմաներ

1. Բժշկական էթիկայի և իրավունքի փոխհարաբերությունը ժամանակակից առողջապահական համակարգում:
2. Օվիեդոյի կոնվենցիայի դերը մարդու իրավունքների և կենսաբժշկության զարգացման գործում:
3. ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան պացիենտների իրավունքների պաշտպանության ոլորտում. վերլուծություն և զարգացման միտումներ:
4. Իրազեկված համաձայնության ինստիտուտի իրավական և բարոյական ասպեկտները վիրաբուժական միջամտությունների ժամանակ:
5. Անգործունակ և անչափահաս պացիենտների որոշում կայացնելու իրավունքը և դրա իրավական սահմանափակումները:
6. Բժշկական գաղտնիքը թվային դարաշրջանում. էլեկտրոնային առողջապահության (e-

health) մարտահրավերներն ու անվտանգության ռիսկերը:

7. Մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը և հանրային առողջապահական անվտանգությունը. շահերի բախման իրավական լուծումները համաճարակների պայմաններում:
8. Արհեստական բեղմնավորման և փոխնակ մայրության իրավական և բիոէթիկական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:
9. Էմբրիոնի իրավական կարգավիճակը և դրա պաշտպանության մեխանիզմները միջազգային իրավունքում:
10. Էվթանազիայի և բժշկի աջակցությամբ ինքնասպանության օրինականացման հիմնախնդիրը համեմատական իրավունքում:
11. Կյանքի ավարտի որոշումները պալիատիվ խնամքի համատեքստում. էթիկական և իրավական չափանիշների փոխազդեցությունը:
12. Դիակային դոնորության «ենթադրյալ» (opt-out) և «հստակ» (opt-in) համաձայնության մոդելների համեմատական իրավական վերլուծություն:
13. Մարդկային օրգանների ապօրինի շրջանառությունը (թրաֆիքինգը) և դրա դեմ պայքարի միջազգային ու քրեաիրավական մեխանիզմները:
14. Կենդանի դոնորության բիոէթիկական սկզբունքները և դոնորի կամավորության ապահովման իրավական երաշխիքները:
15. Մարդու մասնակցությամբ կենսաբժշկական հետազոտությունների իրավական կարգավորումը և էթիկական հանձնաժողովների գործառույթները:
16. Խոցելի խմբերի (երեխաներ, հոգեկան խանգարում ունեցողներ) ներգրավումը կլինիկական փորձարկումներում. իրավական պաշտպանության հատուկ մեխանիզմները:
17. Գենետիկական տվյալների բազաների (biobanks) ստեղծման և տեղեկատվության օգտագործման մարդու իրավունքների չափանիշները:
18. Բժշկական սխալ, թե՛ մասնագիտական անփութություն. պատասխանատվության սահմանները և գնահատման իրավական չափանիշները:
19. Արհեստական բանականության (AI) կիրառումը բժշկության մեջ. նորագույն տեխնոլոգիաների բիոէթիկական և իրավական մարտահրավերները:
20. Բուժաշխատողների մասնագիտական և աշխատանքային իրավունքների պաշտպանությունը. բժիշկների նկատմամբ բռնության դեմ պայքարի իրավական ուղիները:

4.3.3. Քննական առաջադրանքների օրինակներ

Թեմա 1. Բժշկական իրավունքի հասկացությունը, աղբյուրներն ու սկզբունքները

Առողջապահական ճգնաժամի (օրինակ՝ համաճարակի) պայմաններում պետության Առողջապահության նախարարությունը հրապարակում է ներքին հրաման, որով հիվանդանոցներին ցուցում է տրվում վերակենդանացման բաժանմունքի (ICU) սահմանափակ մահճակալները և արհեստական շնչառության սարքերը առաջնահերթ տրամադրել մինչև 60 տարեկան պացիենտներին՝ հիմնավորելով դա բժշկական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և հասարակական առավելագույն օգուտի հրամայականով: 75-ամյա պացիենտ

Ա.-ն, ով ունի ապաքինման իրատեսական շանսեր, մերժվում է հոսպիտալացվել այս հրամանի հիման վրա:

1. Բժշկական իրավունքի ո՞ր հիմնարար սկզբունքներն են բխվում այս իրավիճակում (արդարություն, խտրականության արգելք, հանրային շահ vs անձնական շահ):
2. Վերլուծե՛ք նախարարության հրամանի իրավաչափությունը՝ հենվելով Օվիետոյի կոնվենցիայի 2-րդ հոդվածի (մարդու շահերի գերակայությունը հասարակության շահերի նկատմամբ) վրա:
3. Ինչպե՞ս կլուծվի իրավական ակտերի հիերարխիայի (կոլիզիայի) հարցը, եթե ներպետական ենթաօրենսդրական ակտը հակասում է միջազգային կոնվենցիային:

Թեմա 2. Պացիենտի ազատ ընտրության ու իրազեկված համաձայնության իրավունքը

16-ամյա Բ.-ն ծանր ավտովթարից հետո տեղափոխվել է հիվանդանոց՝ արյունահոսությամբ: Բժիշկները հայտնում են, որ կյանքը փրկելու համար հրատապ անհրաժեշտ է արյան փոխներարկում: Բ.-ն և նրա ծնողները «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամ են և կտրականապես հրաժարվում են արյան փոխներարկումից՝ առաջարկելով բուժման այլընտրանքային, բայց տվյալ իրավիճակում ոչ արդյունավետ մեթոդներ: Բժիշկը, տեսնելով պացիենտի կյանքին սպառնացող անմիջական վտանգը, որոշում է փոխներարկումն անել՝ հակառակ նրանց կամքի:

1. Ո՞ւմ համաձայնությունն է պահանջվում տվյալ պարագայում, և արդյո՞ք 16-ամյա անձը (որպես անչափահաս) ունի բուժումից հրաժարվելու բացարձակ իրավունք:
2. Ինչպե՞ս է ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան (կրոնի ազատություն vs կյանքի իրավունք) մեկնաբանում հասուն անչափահասի և ծնողների որոշումները պետության պոզիտիվ պարտականությունների համատեքստում:
3. Ենթակա՞ է արդյոք բժիշկը քրեական կամ քաղաքացիական պատասխանատվության՝ առանց իրազեկված համաձայնության միջամտություն իրականացնելու համար (քննարկել ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը):

Թեմա 3. Բժշկական գաղտնիքը ու բժշկական տվյալների պաշտպանությունը

Պացիենտ Գ.-ի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ: Գ.-ն գտնվում է օրինական ամուսնության մեջ և բուժող բժշկին կտրականապես արգելում է իր ախտորոշման մասին հայտնել ամուսնուն՝ պատճառաբանելով, որ դա կհանգեցնի ընտանիքի կործանմանը: Բժիշկը, գիտակցելով ամուսնու վարակման բարձր ռիսկը, կանգնած է երկընտրանքի առջև:

1. Արդյո՞ք Գ.-ի ախտորոշումը հրապարակելը տվյալ պարագայում կհամարվի բժշկական գաղտնիքի ապօրինի հրապարակում:
2. Վերլուծե՛ք «երրորդ անձանց վնասից պաշտպանելու» (Duty to warn) էթիկական և իրավական հայեցակարգը: Ի՞նչ բացառություններ է նախատեսում օրենսդրությունը բժշկական գաղտնիքի պահպանման կանոնից:
3. Ի՞նչ պատասխանատվություն կարող է կրել բժիշկը երկու հնարավոր սցենարներում. ա) եթե խախտի գաղտնիքը, բ) եթե պահպանի գաղտնիքը, և ամուսինը վարակվի:

Թեմա 4. Վերարտադրողական առողջությունն ու էմբրիոնի պաշտպանություն

Ամուսիններ Դ.-ն (կին) և Ե.-ն (տղամարդ) դիմել են արհեստական բեղմնավորման (ԱՄԲ) կլինիկա, ստացել և սառեցրել են 3 էմբրիոն (սաղմ): Տարիներ անց զույգը բաժանվում է: Դ.-ն, ով

տարիքի և առողջական խնդիրների պատճառով այլևս չի կարող նոր ձվաբջիջներ արտադրել, պահանջում է օգտագործել սառեցված էմբրիոնները հղիանալու համար (որպես մայրանալու իր վերջին հնարավորություն): Նախկին ամուսին Ե.-ն կտրականապես դեմ է և պահանջում է ոչնչացնել էմբրիոնները՝ պնդելով, որ իրավունք ունի չդառնալու հայր իր կամքին հակառակ:

1. Ո՞ւմ իրավունքն է գերակայում այս պարագայում՝ կնոջ վերարտադրողական իրավո՞ւնքը (մայրանալու վերջին շանս), թե՞ տղամարդու ինքնավարությունը (չպարտադրված ծնողավարություն): Զննարկեք ՄԻԵԴ պրակտիկան (օրինակ՝ Էվանսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը):
2. Ի՞նչ իրավական կարգավիճակ ունի in vitro պայմաններում գտնվող սաղմը ըստ միջազգային իրավունքի և ներպետական օրենսդրության:
3. Ինչպե՞ս պետք է կլինիկան ձևակերպած լինել պայմանագիրը սկզբնական փուլում՝ նման իրավական բարդություններից խուսափելու համար:

Թեմա 5. Կյանքի ավարտի էթիկական հարցերը

Պացիենտ Զ.-ն տառապում է ամիոտրոֆիկ կողմնային սկլերոզով (ALS): Նա նախապես, երբ դեռ գիտակցությունը և շարժունակությունը լրիվ պահպանված էին, նոտարական կարգով վավերացրել է «կտակված բժշկական ցուցումներ» (advance directive), որով խնդրում է անջատել իրեն արհեստական շնչառության ապարատից և չկիրառել կյանքը երկարաձգող ինտենսիվ թերապիա, եթե նա ընկնի վեգետատիվ վիճակի մեջ: Պացիենտը հայտնվում է կոմայի մեջ: Բժիշկները պատրաստվում են կատարել նրա կամքը, սակայն նրա միակ զավակը դիմում է դատարան՝ պահանջելով շարունակել բուժումը՝ պնդելով, որ կյանքի իրավունքը բացարձակ է:

1. Ի՞նչ իրավական ուժ ունի պացիենտի նախնական կամարտահայտությունը իրազեկված համաձայնության (կամ մերժման) համատեքստում:
2. Արդյո՞ք կենսաապահովման սարքերից անջատելը տվյալ դեպքում որակվում է որպես պասիվ էվթանազիա, և արդյո՞ք դա քրեորեն պատժելի արարք է մեզ մոտ:
3. Ինչպե՞ս է ՄԻԵԴ 2-րդ հոդվածը մեկնաբանվում անձի՝ կյանքի ավարտի վերաբերյալ ինքնավար որոշում կայացնելու տեսանկյունից: Արդյո՞ք հարազատի պահանջը իրավաչափ է:

Թեմա 6. Օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստումը

Պացիենտ Է.-ն ունի երիկամային անբավարարություն և գտնվում է հեմոդիալիզի մեջ: Նրա զարմիկ Ը.-ն, ով ունի թեթև աստիճանի մտավոր հետամնացություն, սակայն ֆիզիկապես առողջ է և իրավաբանորեն գործունակ (անգործունակ չի ճանաչվել), հայտնում է իր համաձայնությունը դառնալու կենդանի դոնոր: Հիվանդանոցի էթիկայի հանձնաժողովը կասկածներ ունի, որ Ը.-ն ամբողջությամբ չի գիտակցում վիրահատության բարդություններն ու հետագա ռիսկերը, և որ ընտանիքի մյուս անդամները հոգեբանական ճնշում են գործադրել նրա վրա:

1. Որո՞նք են կենդանի դոնորության օրինականության պարտադիր պայմանները (կամավորություն, գիտակցվածություն, ազգակցական կապ և այլն):
2. Ինչպե՞ս պետք է գնահատվի իրազեկված համաձայնության վավերականությունը խոցելի խմբերի (այս դեպքում՝ մտավոր խնդիրներ ունեցող, բայց գործունակ անձի) դեպքում՝ համաձայն Օվիեդոյի կոնվենցիայի պահանջների:
3. Ի՞նչ որոշում պետք է կայացնի էթիկայի հանձնաժողովը և ի՞նչ իրավական ընթացակարգ պետք է ապահովի հիվանդանոցը՝ կանխելու հնարավոր շահագործումը:

Թեմա 7. Կենսաբժշկական հետազոտություն

Դեղագործական ընկերությունը նոր հակադեպրեսանտի կլինիկական փորձարկումներ է իրականացնում հոգեբուժական կլինիկայում գտնվող պացիենտների շրջանում: Փորձարկմանը մասնակցելու համար պացիենտները ստորագրել են համաձայնագրեր: Հետազայում պարզվում է, որ համաձայնագիրը գրված է եղել խիստ բարդ բժշկական տերմինաբանությամբ, և պացիենտներին (որոնցից շատերը գտնվել են հոգեմետ դեղերի ազդեցության տակ) լիարժեք չեն բացատրվել ռիսկերն ու այն փաստը, որ մի խումբը ստանալու է պլացեբո (դատարկ դեղահար): Արդյունքում, պլացեբո խմբի որոշ պացիենտների վիճակը կտրուկ վատթարացել է:

1. Արդյո՞ք խախտվել են Հելսինկյան հռչակագրի և Նյուրնբերգյան կոդեքսի հիմնարար պահանջները այս կլինիկական փորձարկման ընթացքում (հիմնավորել իրագրված համաձայնության որակի տեսանկյունից):
2. Իրավաչափ և էթիկական է արդյոք պլացեբոյի կիրառումը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող պացիենտների շրջանում, երբ առկա է վիճակի վատթարացման լուրջ ռիսկ:
3. Ո՞վ պետք է կրի իրավական պատասխանատվությունը վնասի համար (գլխավոր հետազոտողը, դեղագործական ընկերությունը, թե՞ էթիկայի հանձնաժողովը, որը հաստատել է ծրագիրը), և ի՞նչ դեր պետք է ունենար պարտադիր ապահովագրությունը:

4.4. Մեթոդական նյութեր, որոնք սահմանում են գնահատման ընթացակարգերը

4.4.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը

Մեմինար պարապմունքները ներառում են տեսական հարցերի բանավոր քննարկում:

Գնահատվում են ընկալման խորությունը, փաստարկելու կարողությունը, տերմինաբանությանը տիրապետելը:

Ուսանողից կարող է պահանջվել ներկայացնելու էսսեներ կամ ռեֆերատ: Ծավալը՝ 5–7 էջ:

Գնահատվում են վերլուծության ինքնուրույնությունը, դոկտրինի օգտագործումը, ձևավորումը:

4.4.2. Ատեստավորման ձևը (ստուգարք, քննություն)

Ստուգարքը (քննությունը) անցկացվում է գրավոր ձևաչափով: Տոմսի կառուցվածքը ներառում է մեկ իրավիճակային խնդիր: Կատարման ժամանակը 60 րոպե է: Ուսանողներին չի տրամադրվում լրացուցիչ նյութեր, սակայն դասախոսի հայեցողությամբ թույլատրվում է օգտագործել նորմատիվ ակտերի տեքստեր:

4.4.3. Գնահատման ընթացակարգը

Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է 0–100 միավոր սանդղակով՝ հետագա փոխարկմամբ 7-բալյա համակարգի: 88–100 միավորի դեպքում տրվում է A (գերազանց), 76–87-ի դեպքում՝ B (շատ լավ), 64–75-ի դեպքում՝ C (լավ), 52–63-ի դեպքում՝ D (բավարար), 40–51-ի դեպքում՝ E (բավարար սահմանային), 20–39-ի դեպքում՝ FX (անբավարար), իսկ 0–19-ի դեպքում՝ F (անբավարար):

Միավորների բաշխումը տոմսում կատարվում է հետևյալ կերպ. վերլուծական հարցը գնահատվում է մինչև 40 միավոր, իսկ իրավիճակային խնդիրը՝ մինչև 60 միավոր: Նշված բաշխումը կարող է փոփոխվել՝ կախված հարցերի բարդությունից:

4.4.4. Գնահատման չափանիշներ

Գնահատելիս հատկապես հաշվի են առնվում պատասխանի վերլուծական բնույթը (այլ ոչ թե սահմանումների պարզ թվարկումը), իրավական փաստարկման առկայությունը (ինչու է տվյալ մոտեցումը ճիշտ), կոնկրետությունը (հղումներ նորմատիվ ակտերին, դոկտրինալ դիրքորոշումներին, օրինակներին), ինչպես նաև կառուցվածքայնությունը (ներածություն, հիմնական մաս, եզրակացություն յուրաքանչյուր ենթակետի համար):

4.4.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ

Մեմինար պարապմունքների համար անհրաժեշտ է մշակել լրացուցիչ ուսումնական կամ դոկտրինալ աղբյուրներ յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ:

Իրավիճակային խնդիրը լուծելիս պետք է հաջորդաբար կիրառել հետևյալ սխեման. փաստեր → իրավական խնդիր → նորմ/դոկտրին → փաստարկում → եզրակացություն:

Ստուգարքի (քննության) ժամանակ խորհուրդ է տրվում հստակ կառուցել պատասխանը՝ ներածություն, հիմնական մաս, եզրակացություն, ճիշտ օգտագործել իրավական տերմինաբանությունը, անհրաժեշտության դեպքում հղումներ կատարել ՀՀ

Սահմանադրությանը և ՀՀ օրենքներին, ինչպես նաև հիմնավորել իր դիրքորոշումը՝ հղումներով դոկտրինալ մոտեցումների

